ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ավագանի

**ԳՅՈՒՄՐՈՒ ԱՎԱԳԱՆՈՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*

06 սեպտեմբեր 2022թ.

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սամսոնյան,

Ձեզ եմ ներկայացնում «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» խորագրով միջազգային գիտաժողովի կազմակերպման եւ անցկացման նպատակով դրամական միջոցներ հատկացնելու մասին» որոշման նախագիծը:

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը՝ վերը նշված նախագիծն ընդգրկել Գյումրի համայնքի ավագանու սեպտեմբերի 15-ին կայանալիք հերթական նիստի օրակարգ:

ԳՅՈՒՄՐՈՒ ԱՎԱԳԱՆՈՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՔՆԱՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
«Շիրակի հայագիտական հետազոտություն
ների կենտրոն»
ՊՈԱԿ

**Republic of Armenia**
**National Academy of Sciences**
**"Shiraks Research Centre for Armenological Studies"SNCO**
**Республика Армения**
**Национальная академия наук**
**"Ширакский центр арменоведческих исследований" ГНКО**

ՀՀր. Գյումրի, Վ. Սարգսյան 5ա, հեռ.(312) 69477, (094) 213841, E-mail: hkentron@mail.ru RA Gyumri, V. Sargsyan 5a, tel. (312) 69477, (094) 213841

« 05 » 09 2022 թ.
N 35

Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու
«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության
ղեկավար ՔՆԱՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Ք. Հարությունյան,

Սկսած 1994թ.՝ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնը եռամյա պարբերականությամբ Գյումրիում կազմակերպում է «Շիրակի պատմամշակութային ժառանգություն. հայագիտության արդի հիմնահարցեր» խորագրով միջազգային գիտաժողովներ, որոնք կոչված են նպաստելու Հայաստանի և սփյուռքի հայագիտական ուսումնասիրությունների ժամանակակից մակարդակը, առաջադրելու ուսումնասիրվող և ձևավորվող ուղղությունների նոր գիտական մեկնաբանություններն ու նարավորությունների սահմաններում ուրվագծելու հայագիտության ընդհանուր համատեքստում Շիրակի հարուստ ազգագրության, բանահյուսության, պատմության, արհեստների և արվեստների ուսումնասիրության հետազոտական ընթացքն ու առաջնահերթությունները XXI դ. առաջին քառորդին:

Հերթական գիտաժողովը տեղի կունենա սեպտեմբերի 23-25-ին և նվիրված է ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի հիմնադրման 25-ամյակին: Նրա աշխատանքներին մասնակցելու հայտեր են ներկայացրել ՀՀ և արտերկրի 140 հայագետներ:

Ըստ նախահաշվի՝ գիտաժողովի իրականացման ծախսերը կկազմեն 4.976.650 (չորս միլիոն ինը հարյուր յոթանասունվեց հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ: Աջակցելու խնդրանքով ԳԱԱ ՇՀՀ կենտրոնը դիմել է ՀՀ նախագահին, ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեին և ԳԱԱ նախագահությանը:

Խնդրում ենք Ձեր աջակցությունը վերոնշյալ եռօրյա գիտաժողովի աշխատանքները բարձր մակարդակով կազմակերպելու և անցկացնելու համար:

Կից ներկայացնում ենք հակիրճ տեղեկատվություն ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի և ՇՊՄԺ գիտաժողովների մասին (Առդիր՝ 1 էջ), ինչպես նաև գիտաժողովի կազմակերպման ծախսերի ֆինանսական նախահաշիվը (Առդիր՝ 2 էջ):

Հարգանքով՝

ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կ տնօրեն Ա. Հայրապետյան

h/h 094213841, 043213841
էլ. փոստ՝ a.hayrapetyan@shirakcenter.sci.am

ձև 2

# Միջոցառման ծախսերի նախահաշիվ

**«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 11-րդ գիտաժողով**

| հ/հ | Ծախսերի անվանումը | Միավորը | Միավորի արժեքը | Քանակը | Ընդամենը (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տեղեկատվական նյութերի հրատարակում | հատ | **2000** | **150** | **300000** |
| 2 | Զեկույցների հրատարակում | հատ | **4450** | **150** | **667500** |
| | **Ընդամենը** | | | | **967500** |

ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի գլխավոր հաշվապահ (ստորագրություն) *Լ. Կոստանյան* (Ա.Ա.Հ.)

Կենտրոնի տնօրեն՝ պրոֆեսոր (ստորագրություն) *Ա. Հայրապետյան* (Ա.Ա.Հ.)

Կ.Տ.